ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԾՔԱՆԾԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սույն թվականի սեպտեմբերի 20-ին, երեքշաբթի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի ընդունարանում տեղի ունեցավ ՍՍՀՄ Խաղաղության ֆոնդի Ոսկե մեդալի հանձնում Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետին:

Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին ՀՍՍՀ Կոմպոզիտորների միության և Խաղաղության ֆոնդի նախագահ պրն. Էդվարդ Միրզոյանը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ստեփան Վարդանյանն ու տեղակալ Ռ. Զարգարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանները, հայրենի մտավորականներ ու մշակույթի գործիչներ, սփյուռքահայ հյուրեր և պաշտոնական այլ անձինք:

Նախ պրն. Միրզոյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետին Խաղաղության ֆոնդի Ոսկե մեդալով պարգևատրելու կառավարական հրամանագիրը, ապա, հանուն ՀՍՍՀ Խաղաղության ֆոնդի, արտահայտեց ամենաջերմ շնորհավորանքներ ու բարեմաղթություններ:

Պրն. Միրզոյանի խոսքից հետո պրն. Ս. Վարդանյանը ընթերցեց կառավարական ուղերձները և շնորհավորեց Վեհափառ Հայրապետին կառավարական բարձր պարգևի արժանանալու կապակցությամբ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Մեծարգո Վեհափառ,

Նշանակալից հոբելյաններ են լինում, որոնք առանձնակի ջերմությամբ ու երախտագիտությամբ են նշվում ժողովրդի և պետության կողմից: Ձեր ճերմակազարդ ութսունամյակը այդպիսիներից է:

Խորհրդանշական է, որ Ձեր տարեդարձը նշվում է մեր երկրի և ժողովրդի համար բախտորոշ մի ժամանակահատվածում՝ վերակառուցման, հրապարակայնության, դեմոկրատիայի և քաղաքական նոր մտածողության ընդլայնման շրջանում: Ընդամենը մի քանի տարի առաջ, երբ մարդկության վրա կախված էր աշխարհակործան միջուկային աղետի սանձազերծման իրական վտանգը, Եկեղեցին, խաղաղասիրական մյուս ուժերի հետ մեկտեղ, սատար կանգնեց մեր երկրի այն ջանքերին, որոնք նպատակամղված էին լարվածության թուլացմանը, ժողովուրդների միջև փոխադարձ վստահության ամրապնդմանը: Այսօր ուրախությամբ արձանագրում ենք, որ Եկեղեցու ընդհանուր խաղաղարարական գործունեության մեջ իրեն վայել ավանդն է ներմուծում նաև Հայ Առաքելական Եկեղեցին, որի Հոլվվապետը արդեն 33 տարի է, ինչ Դուք եք:

Ձեր վերջին հրապարակային ելույթներից մեկում Դուք ասացիք. «Մեր մայր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, արգասիքն է հազար տարիներ շարունակ հայ ազգի արդար երազանքների և բազում սերունդների ազատագրական հերոսական մաքառումների»: Սա Ձեր, որպես եկեղեցական գործչի ու մարդու, հավատամքն է: Եվ պատահական չէ, որ Ս. Էջմիածինը աշխարհասփյուռ հայությանը սովետական հայրենիքի հետ կապող հաստատուն կամուրջն է:

Թույլ տվեք սրտանց շնորհավորել Ձեզ Ձեր 80-ամյա հոբելյանի առթիվ սովետական պետության ամենապատվավոր պարգևներից մեկին՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանին արժանանալու համար, և, օգտվելով այս առիթից, ձեր տերմինաբանությամբ ասել՝ խաղաղություն ընդ ձեզ ի բարօրություն հայ ժողովրդի և Սովետական Հայաստանի, ի զորացումն մեր մեծ Միության ժողովուրդների խաղաղ դաշնության:

Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան,
19 սեպտեմբերի 1988 թ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Վեհափառություն,

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի կողմից ընդունեցեք ջերմագին շնորհավորանքներ Ձեր փառապանծ 80-ամյակի առթիվ:

Հավատարիմ հայրենի երկրի կանչին և մեր հինավուրց ավանդներին, Դուք լավագույնս եք կատարում ժողովրդին անմնացորդ նվիրվելու Ձեր ուխտը:

Դուք իմաստնաբար ու մեծագույն խոհեմությամբ ամրացնում և զարգացնում եք հայրենի երկրում և Սփյուռքում ապրող մեր ժողովրդի երկփեղկված հատվածների միասնության գաղափարը, հայրենի շունչ ու կենսունակություն եք պարգևում աշխարհի տարբեր ծագերում օտարացման

վտանգի առջև կանգնած հայ հոգիներին, հավատ եք ներշնչում լուսավոր ապագայի նկատմամբ:

Երկարամյա Ձեր քահանայապետության տարիներին Դուք մեծ հոգատարություն եք հանդես բերում մեր ժողովրդի նյութական և մշակութային կոթողների ու գանձերի նկատմամբ, վերաշինում ու նոր կյանքի եք կոչում կործանման եզրին կանգնած մեր ճարտարապետական շատ հուշարձաններ, գուրգուրանքով հատիկ առ հատիկ հավաքում եք մեր հոգևոր մշակույթի ի սփյուռս ցրված մասունքները: Ձեր անմիջական հսկողությամբ կառուցված հայ արվեստի սքանչելի գանձատունը, նոր շունչ ու ոգի ստացած Էջմիածնի տաճարը, Ձեր բազում հայրենաշեն այլ մեծագործությունների հետ, դարեր պիտի ապրեն և պանծացնեն Ձեր անունը:

Հայ ժողովրդի միասնության պայքարի ներկայիս դժվարին ժամանակաշրջանում ժողովրդական զանգվածներին ուղղված Ձեր բազմախորհուրդ ու շինիչ խոսքերն ու կոչերը մեծապես նպաստեցին շիկացած կրքերի հանգըստացմանն ու ճշգրիտ կողմնորոշմանը:

Մեր նորոգ Հայրենիքի կառավարությունը բարձր է գնահատում Ձեր պետական լայնախոհ մտածողությունն ու գործունեությունը, անհերթ կամքը ու իմաստությունը, ժողովուրդների միջև տևական բարեկամության ու խաղաղության Ձեր ջանքերը:

Հարգարժան Վեհափառ,

Ձեր փառապանծ հոբելյանի այս օրերին սովետական կառավարությունը մեկ անգամ ևս Ձեզ արժանացրել է կառավարական բարձր պարգևի: Այդ առիթով նաև ընդունեցեք Հայաստանի Մինիստրների խորհրդի ջերմ ու անկեղծ շնորհավորանքները: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն ու արևշատություն ի փառս մեր ժողովրդի:

ՖԱԴԵՅ ՏԱՃԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան,
20 սեպտեմբերի 1988 թ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ձերդ Սրբություն,

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Ձեր ծննդյան 80-ամյակի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվելու առթիվ:

Հայրենանվեր և հայրենաշեն գործով է նշանակալից Ձեր վաստակաշատ կյանքի ուղին: Դեռևս երիտասարդական տարիներին Դուք անմնացորդ նվիրումով ծառայագրվեցիք Սփյուռքի հայության ամենակենսական խնդիրների իրականացման գաղափարին:

Վաղ շրջանի Ձեր մանկավարժական, հրապարակախոսական գործունեությունը հստակորեն նպատակամղված է հայապահպանության և

Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շուրջ Սփյուռքի հայությանը սերտորեն համախմբելու վսեմ գործին:

Արդեն 33 տարի է, ինչ Դուք գլխավորում եք Հայոց Առաքելական Եկեղեցին: Այդ տարիները երջանիկ պատահականությամբ համընկան հայ-ժողովրդի համար երկարատև խաղաղության մի ընթացքի, որը նրան հնարավորություն ընձեռնեց ավելի շենացնելու ու բարեփոխելու իր հնագույն ուստանը, զարգացման նոր աստիճանի բարձրացնելու հարազատ երկրի տնտեսությունն ու մշակույթը:

Ձեր գահակալության տարիներն արգասաբեր եղան մասնավորապես Հայ Առաքելական Եկեղեցու համար: Հայրենիքում և Սփյուռքում, Ձեր անխոնջ ջանքերի շնորհիվ, բարգավաճեց եկեղեցական կյանքը, վերականգնվեցին և կառուցվեցին բազմաթիվ նոր եկեղեցիներ ու վանքեր: Հայոց Եկեղեցին, հոգևորականությունը հաստատուն կերպով կանգնեցին հայրենասիրության և խաղաղության պաշտպանության դիրքերում՝ իրենց ծանրակշիռ բաժինը բերելով ազգային և համամարդկային իդեալների անխուսափելի հաղթանակին:

Լինելով խորապես իրատես քաղաքացի և գործիչ, հայրենասեր և հումանիստ, Դուք Ձեր գահակալության բոլոր տարիներին անվարան հաստատակամությամբ եք հանդես եկել հայ ժողովրդի գերագույն շահերի պաշտպանության դիրքերում՝ նրա անվտանգ գոյությունը և ազգային ապահովությունը տեսնելով Սովետական Միության եղբայրական ժողովուրդների միասնական ընտանիքում, ռուս մեծ ժողովրդի հետ մեր ժողովրդի դարավոր բարեկամության անշեղ մայրուղում:

Ձերդ Սրբություն,

Կրկին անգամ ջերմորեն շնորհավորելով Ձեզ՝ Ձեր հոբելյանի և կառավարական բարձր պարգևի արժանանալու առթիվ, խնդրում եմ ընդունել երկար տարիների արհաշտության և բեղմնավոր աշխատանքի մեր լավագույն ցանկությունները ու մաղթանքները:

Խորին հարգանքներով՝

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան,
20 սեպտեմբերի 1988 թ.

Պրն. Վարդանյանի խոսքից հետո, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, Վեհափառ Հայրապետին շնորհավորեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գ. Խանջյանը: Նա իր խոսքի մեջ հանգամանալից կերպով անդրադարձավ Վեհափառ Հայրապետի կյանքի անցած ուղուն և նշեց այն մեծ դերը, որ կատարում է Վեհափառ Հայրապետը հայապահպանության սուրբ գործում: Նա ի մասնավորի նշեց.

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆԻ ԽՈՍՔԸ

...Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 1955 թ. սեպտեմբերի 30-ին ի լուր Հայոց աշխարհի հայտարարվեց նոր կաթողիկոսի անունը՝ Նորին Սուրբ Օծություն Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա:

Եվ ահա 33 տարի է՝ Նաև հոգու, սրտի և մտքի ողջ էությամբ նվիրված ծառայում է իր հոգևոր կոչմանը: Ծանր ժառանգություն ստացավ Վեհափառ Հայրապետը: Մեզ լավ հայտնի մթնոլորտը երկրում անասելի դժվարություններ առջև կանգնեցրեց Հայոց Հայրապետին. բայց նա իր առաքելության համար տերն էր և չնահանջեց ու քայլ սա քայլ նվաճեց այն ամենը, ինչ այսօր կազմում են Ս. Էջմիածնի պատիվն ու հպարտությունը: Անընդհատ ոչ միայն հավատացյալների հոգու նորացմանը, այլև իր գործը և կոչումը լավ հասկացող, իմաստուն, հայրենասեր Հայրապետը ձեռնարկեց բազում գործեր և ասաց. «Եկայք շինեսցուք»: Այս 33 տարիների մեջ է, որ բազմաթիվ գործող եկեղեցիներ վերաշինվեցին ու վերականգնվեցին, նոր շունչ և իմաստ ստացան ու պահպանության տակ առնվեցին մեր ժողովրդի հոգևոր ու աշխարհիկ գանձերը, մեր պատմության և ստեղծագործ հանճարի անձայն վկաները: Ով չգիտե, որ դժվար ժամանակներում Հայ Եկեղեցին իր ազգապահպան դերն է կատարել՝ շուրջը հավաքելով և իր հովանու տակ առնելով մեր ազգի լուսավոր գործերը:

...Դժվար է գերագնահատել Սփյուռքը Հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ կապելու աշխատանքը, որը Հայոց Հայրապետի հիմնաքարերից մեկն է: Չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ նման ծավալ արձանագրված չէ և մեր ոչ մի տարեգրում: Եվ այս ամենի մեջ մեծ դեր ունեն նրա անձնական հմայքը և եռանդը: Վերածնված Հայրենիքը և Ս. Էջմիածինը նոր ձգողական ուժ և իմաստ ստացան: Այս է պատճառը, որ մեր շատ ու շատ հայրենակիցներ բերին և բերում են իրենց լուման և՛ Մայր Աթոռին, և՛ վերածնված Հայրենիքին: Անհնար է չհիշատակել հայրապետական ուղևորությունները աշխարհի հայաշատ վայրերում՝ 10 անգամ՝ 33 տարիների ընթացքում:

Տասն անգամ Սփյուռքում ապրող մեր հայրենակիցները լսեցին հայրապետական գավազանի զարկը և Հայրապետի հուզիչ ու կենարար խոսքը՝ բերված Մայր Հայրենիքից, Սուրբ Էջմիածնից:

Տասն անգամ հայ մնալու, հայրենիքով ապրելու, նրա հավատով էլ ավելի բոցավառվելու, սիրո և նվիրումի խոսքը, որը յուրաքանչյուր անգամ դառնում էր մի նոր կիրակնօրյա կամ ամենօրյա վարժարան, մի նոր եկեղեցու հիմնադրում կամ օրհնում, մի նոր միություն կամ մշակույթի տուն՝ հիմքում ունենալով մեկ նպատակ՝ հայապահպանում, նվիրում հայ հավատին ու հայոց լեզվին. միասնականության, հայրենասիրության գաղափարը, որոնք հայ մնալու և հայ ապրելու միակ ճշմարիտ ճանապարհներն են: Նա իր գործուն մասնակցությունը, իր շունչն է բերում մեր առօրյա կյանքի, պայքարի յուրաքանչյուր բաբախումին, իր պետական, ազգային խելամիտ մտածելակերպով, միշտ մնալով ազգապահպան իր սկզբունքների վրա:

...Ես իմ պարտքն եմ համարում արտահայտել այս խոհերը, խաղաղ և արդար մի աշխարհի երազանքով, որպես հոգևոր սպասավոր և պատասխանատու ղեկավարը մի Եկեղեցու և ժողովրդի, որը դարեր շարունակ տառապել է և զոհվել ռազմամոլ նվաճողների սմբակների տակ, մի Եկեղեցի և մի ժողովուրդ, որը ապրել է 1915—17 տարիների բոլորիդ ծանոթ ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում՝ Օսմանյան Կայսրության շրջանին:

Այո, Աբրահամ և Սիրանույշ Պալճյանները չսխալվեցին. նրանց որդին դարձավ քաջ, արի զինվորը Մայր Հայաստանի և հավատավոր նվիրյալը նրա Հայրապետական գահի, և այսօր ամենուր հայերս ասում ենք՝

«Տուր աշխարհիս խաղաղութիւն և հաճութիւն ի մարդիկ» ու երկար արևշատ կյանք նույնքան բեղմնավոր, ինչ մինչև այսօր. մեր սիրելի Հայրապետին:

Ապա Մայր Աթոռի միաբանության անունից շնորհավորանքի սրտագին խոսք ասաց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը.

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր, այս առավոտ նույն այս Վեհարանի շնորհազարդ դահլիճում Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը հավաքվեցին Ձեր ծննդյան 80-ամյակը նշելու համար: Եվ մեր սիրտը վերստին ուրախությամբ լցվեց, որովհետև Հայ Եկեղեցու նավապետը իր կյանքի իմաստության 80-ամյակն է, որ բոլորում է: Իսկ այս ժամին, երբ Սովետական Միության Խաղաղության ֆոնդը Ձերդ Սրբության կուրծքը կզարդարե ոսկյա շքանշանով, իբրև պաշտպան և մարտիկ խաղաղության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, ամբողջ Հայաստանյայց Եկեղեցին և ամբողջ հայ ժողովուրդը հոգեպես հրճվանքի մեջ են, որովհետև նրանք տեսնում են Ձեր անձի մեջ հայ ժողովուրդը խտացած, և այդ խտացած հայ ժողովուրդը այսօր արժանանում է խաղաղության փառավոր շքանշանին: Արժանի եք, Վեհափառ Տեր, որովհետև Ձեր գահակալության 33 տարիների ընթացքում բազմաթիվ մարդասիրական, կառուցողական Ձեր աշխատանքների կողքին նաև Դուք, որպես Նոյան աղավնի, ոչ թե դեպի տապան վերադարձաք ձիթենիի շյուղը Ձեր շրթին խաղաղության ավետիսը բերելու, այլ Արարատյան աշխարհից տարաք ողջ մարդկությանը և հատկապես հայ ժողովրդին խաղաղության ձայնը, եղբայրության ձայնը և մարդկանց համերաշխության, զինաթափության աղաղակը: Այսօր, փառք Աստուծո, տեսնում ենք, թե թեև հակամարտությունները շարունակվում են աշխարհի վրա, թեև տակավին երկրների մեջ անարդարություններ պատահում են, արյուն է թափվում, բայց Ձեր և Ձեր նմանների աշխատանքը, Վեհափառ Տեր, պտղաբերել սկսել է, գարնան ծաղիկներ են բացվել, արդեն ծիլերը սկսել են շյուղեր տալ և կանաչ տերևներ բանալ, որովհետև երկու գերհզոր երկրների ղեկավարները գրեթե փոխադարձ հասկացողության են հասել: Այս բոլորը, Վեհափառ Տեր, նաև Ձեր տքնաջան աշխատանքի արդյունքը պետք է համարել: Այսօր ես Մայր Աթոռի միաբանության անունով և հայ ժողովրդի անունով գալիս եմ Ձեր Աջը համբուրելու, շնորհավորելու Ձեր 80-ամյակը և հատկապես շնորհավորելու Ձեզ՝ Վեհափառ Տեր, որպես խաղաղության մարտիկի, որ այսօր, օլիմպիական խաղերի այս շրջանին Դուք ևս կյանքի օլիմպիական մարտում արժանացաք խաղաղության ոսկի այս շքանշանին: Շնորհավորում եմ, Վեհափառ Տեր:

Հանդիսության ավարտին շնորհակալական խոսք ասաց Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

«Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք»:

Այս կարճ աղոթքը գուցե ամենահաճախ սրտասանված աղոթքն է մեր եկեղեցիներում. «Խաղաղության համար աղոթեցեք Աստծուն»:

Այս պահին ես հուզված եմ և խորապես երախտապարտ այն մեծ պարգևի համար, որ ընծայվում է ինձ Սովետական Միության Խաղաղության ֆոնդի կենտրոնական մարմնի կողմից: Այն ինձ հանձնեց այսօր Հայաստանի Խաղաղության կոմիտեի նախագահ մեծահարգ տիար Էդվարդ Միրզոյանը: Շնորհակալ եմ նաև և խորապես զգացված այն բազում արտահայտությունների համար, որոնք եղան այստեղ: Հատկապես շնորհակալ եմ հայրենի պետական իշխանությանց ողջույնի խոսքերի համար: Այս բոլորը, մի տեսակ, ծանր կերպով ճնշում են ինձ վրա: Եվ պետք է անկեղծ ու համարձակ կերպով ասեմ, որ որևէ հայ հոգևորական, առավել ևս Հայոց կաթողիկոսը, երևի իրավունք չունի սպասելու գնահատանքի խոսքեր, քանի որ խաղաղության գործը նրանց կյանքի հիմնական նպատակներից պետք է լինի: Անշուշտ ես երախտապարտ եմ այս գնահատանքների համար, բայց ուզում եմ ընդգծել. որ դա իմ բնական պարտականություններից մեկն է եղել և գուցե գլխավորը թե՛ քրիստոնեական, թե՛ ազգային-հայրենասիրական և թե՛ մարդասիրական իմաստով:

Հայտնի է, բայց ես էլ ուզում եմ մեկ անգամ ևս կրկնել, որ աշխարհի պատմական կյանքի հորիզոնի վրա խաղաղության և ի մարդիկ հաճության, ժողովուրդների բարեկամության նվիրված առաջին փաստաթուղթը Քրիստոսի Ավետարանն է: Ուրիշ հարց, թե պատմության ընթացքում ինչ-ինչ պայմանների կամ տվյալների, մարդկային տկարությանց և մարդկային մեղքերի հետևանքով, Քրիստոսի Պատգամը հաճախ չի հարգված և չի էլ հարգվում մինչև մեր օրերը շատ տեղերում: Բայց դրա համար մեղավորը Քրիստոսը չէ, այլ մարդկային տկարությունները և ծայրահեղությունները, կրքերը, թշնամանքները, շահերը և այլն:

Խաղաղության գաղափարը իմ և մեր բոլորի սրտին խոսում է իբրև հայ ժողովրդի զավակների, մի ժողովուրդ, որ դարեր շարունակ ուրիշների պատերազմների հետևանքով տուժել է, զոհվել է, նահատակվել է: Պատմությունը երկար է, վերջին ողբերգությունը տեղի ունեցավ 1915 թվականին: Ահա թե ինչու՝ պատմական փորձը, մեր ժողովրդի կենսական շահը թելադրում են մեզ, պարտադրում, որ ոչ միայն պարզապես ջատագովը լինենք խաղաղության գաղափարի, այլև ուղղակի պայքարենք մեր միջոցներով, մեր ուժերի հնարավորության սահմաններում: Այո՛, պայքարել, գործել, որպեսզի աշխարհում խաղաղության դատը հաջողությամբ պսակվի վերջնապես, որովհետև մեր փոքրիկ ազգի ճակատագիրը անքակտելի կերպով կապված է ընդհանուր աշխարհի խաղաղության հարցերի հետ:

Եվ թող թույլ տրվի ինձ ասել, որ եթե պատերազմների ընթացքում մեծ ազգերն էլ մեծ զոհեր են տալիս, սակայն առավել չափով տուժում են փոքր ազգերը, ոտնակոխ են լինում և երբեմն նույնիսկ իսպառ բնաջնջվում: Մեր ժողովրդի պարագան էլ այդ եղավ: Արևելահայաստանը հազիվ փրկվեց 1918-ին շնորհիվ մի հրաշքի, պիտի ասեմ՝ Սարդարապատի հաղթանակի: Բայց այդ վտանգը կրկնվեց նաև 1920-ին, երբ Քյազիմ Քարաբեքիր փաշան քեմալական զորքերով հարձակվեց փոքրիկ, նոր կազմված Հայաստանի վրա, երբ նույն ճակատագիրը կսպասեր նաև այս Հայաստանին, որտեղ այն

ժամանակ հազիվ վեց-յոթ հարյուր հազար հայություն կար: Կարմիր բանակը է, որ վտանգի վերջին պահին օգնության հասավ և պատռեց Ալեքսանդրապոլի չարաշուք պայմանագիրը, քեմսղական զորքերը դուրս քշվեցին Հայաստանից, և վերջապես մեր այս տանջված երկիրը՝ «ոլորի և որբի հայրենիքը», ոտքի կանգնեց:

Ունենք այսօր մի հայրենիք, ուր երեք միլիոնից ավելի հայեր են բնակվում, և որը միակ հույսն է մեր ապագայի, մեր բոլոր նորանոր նվաճումների:

Չգիտեմ ինչպես բացատրեմ, բայց տակավին իմ պատանեկության օրերից, և մինչև այսօր էլ, երկու զգացմունքներ տիրապետել են ինձ վրա. նախ՝ մեր անցյալի ողբերգությունները, 1915 թիվը ներառյալ, և վերածնունդի ուրախությունը, որ իրականացավ Սովետական Հայաստանով և նրա զարգացումով: Բոլոր այլ հարցերից վեր, իմ կարծիքով, այս երկու զգացումները պետք է հանդիսանան առաջնորդող մեր ոգին:

Խոսում ենք խաղաղության մասին: Երբեմն կան մարդիկ, մեզ մոտ էլ, որ, երբ խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության մասին ենք խոսում, հեգնանքով են մոտենում՝ դա համարելով սովետական պրոպագանդա: Եթե այս աշխարհի վրա մարդիկ սպագա ունեն, ապա հիմքերով միայն պիտի կարողանան ապրել՝ խաղաղության, փոխադարձ ըմբռնումի և ազգերի համերաշխ գործակցության ոգով, այլապես կարելի չէ ապրել այս աշխարհի վրա: Դա վերաբերում է մանավանդ մեզ՝ հայերիս, իբրև փոքր ժողովրդի: Դժբախտաբար, այս հուզումնալի օրերին Երևանում գուցե մոռացվում են այս հիմնական ճշմարտությունները: Ես այս առիթը ուզում եմ օգտագործել՝ կոչ անելով մեր ժողովրդին՝ խաղաղասիրության, հանդարտության, հավասարակշռության, խոհեմության, հեռատեսության, կարգապահության և լավատեսության:

Շնորհակալություն բոլորին և բոլորիդ:

Ես արդեն ութսուն տարեկան եմ, թեև իմ հավատալը չի գալիս: Բայց մտածում եմ, վաթսունմեկից սկսել: Տեսնենք, Աստուծո կամքը: Համենայնդեպս, շնորհակալ եմ ամեն բանի համար և մաղթում եմ, որ Աստված Իր հովանին տարածյալ պահի մեր ժողովրդի, մեր Եկեղեցու վրա և առաջնորդի նրանց խաղաղության ճանապարհով: «Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք»: Ամեն»:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը նույնպես ջերմագին շնորհավորում է Վեհափառ Հայրապետին կառավարական բարձր պարգևի արժանանալու առթիվ՝ մաղթելով նրան երկար տարիների քաջառողջ կյանք, իմաստուն հեռատեսությամբ առաջնորդելու համար հայ ժողովրդին դեպի խաղաղության նավահանգիստ: